

ՔԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ք Ա Ռ Ե Ա Կ Ն Ե Ր

Այս էջը կը նուիրեմ բարեկամիս
ՏԻԱՐ ՏԻՐԱՆ ԽԱՉԻԿԵԱՆՆԻՆ

Ամէն մարդու կեանք մ'ես սրած, ինծի երկու սրւիւր, Տէ՛ր,
Կեանքէն մահուան, մահէն կեանքին զացի դարձայ զերդ ըսուեր,
Պիտի ծաղկի օր մը անուրէտ տեղը վերիս՝ հարուածէդ.
Երջանիկ եմ ես յաւիտեան... գոհ եմ ինծի սրածէդ:

Զարկի՞ր ինծի, հարուածիդ տակ ես նըզմըւած... հազարաւոր
Ձեռքեր հասան ինձ օգնութեան... այսպէս ուզեց կամքդ հըզօր.
Հիմա միայն կը մըտածեմ այդ ամենուն թէ փոխարէն,
Ով Աստուած իմ, սիրով չընչին, ի՞նչպէս պիտի ես վընարեմ:

Ժամանակին՝ անծայրածիր, միջոցին մէջ անսահման,
Հազար կեանքով, հազար յանգով ես մի անցորդ եմ միայն,
Բաժնըւեր եմ ես ամենուն ու բաժնըւիմ պիտի դեռ,
Մինչեւ հասնիմ օր մը իրեն, գտնեմ իր մէջ զիս լրման:

Մայիս 1950

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ



Հ Ո Գ Ի Ս Օ Ր Օ Ր Ե Մ

Դադրի ամէն թող շրջունչ,
Ձեւերը բոլոր
Լուծուին մութին մէջ անունչ
Եւ խորհրդաւոր:

Եւ Թախիծը թող երգէ
Իր հին մեղեդին,
Հին օրօրով ամոքէ
Յոգնած իմ հոգին:

Հոգիս կախեմ յուրան
Ոսկի թելերէն,
Այսպէս մինչեւ արեալոյս
Օրրեմ մեղմօրէն:

Այսպէս խուցիս մութին մէջ.
Այս գիշեր նորէն,
Բանամ յուրան էջ առ էջ
Հոգիս օրօրեմ:

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ